

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1866

232.9

9-55

1924

0 170

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

(52)

# ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ՄՈՎՍԷՍ



ՏՊԱԳՐ. Յ. Մ. ԱԼԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՒՍ

1924

ՇՊՆ. 9  
Գ. 55

232 9

9-55



Ձ Ե Կ Ո Յ Յ

1886 Սեպտեմբեր ամսուն մէջ, յառաջ քան  
զձեռնադրութիւնս ի սարկաւազութենէ ի կուսակրօն  
ֆահանայութիւն, ըստ պահանջման Տնօրէն Ժողովոյ  
Առաքելական Ս. Աթոռոյն Երուսաղէմի՝ հետեւեալ  
կրօնական գրուածքը պատրաստելով մասուցի, զոր  
նոյնութեամբ կուսամ հրատարակութեան իբրեւ յի-  
շատակ:

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ.

Երուսաղէմ, 1920

*Եղիշէ Եպիսկոպոս  
Չիլինկիրեան*

5-0 88150

ԵՅ 100850

Քրիստոս ի՞նչ պաշտօններ կատարելու կոչում ուներ եւ կատարեց.—Քրիստոսի պաշտօնը ի՞նչ նմանութիւն ուներ, կամ առաւելութիւն՝ Մովսէսի պաշտօնէն. — Քրիստոսնեայք ինչո՞վ պիտի նմանին Քրիստոսի կեանքին:

Մարդասէր Աստուծոյ արարչագործութեան գլուխ գործոց սքանչելի արարածը և իր Աստուածութեան կենդանի տիպարը կրող մարդկային ազգը՝ իր ստեղծմանէն մինչև ի Քրիստոս Յիսուս վեց հազար տարուան միջոց՝ նախամարդոց՝ պատուիրանազանցութեամբն սկզբնական մեղօք կը տառապէր, և կը սատանէր հեթանոսութեան և մոլորութեան խորին խաւարի մէջ: Թէև նա մերթ ընդ մերթ ունեցաւ իւր մէջ բնական լուսով լուսաւորուած հաւատացեալ աստուածապաշտներ, և մանաւանդ հրէից ընտրեալ Ազգը՝ իրացի բնական լուսէն, ունեցաւ նաև աստուածակոյս կողմանէ յայտնութիւններ, որոնցմով կ'առաջնորդուէր երբեմն զէպ ի փրկութեան ճանապարհը, սակայն բազում այն էր, որ որպէս անչափահաս մանուկ՝ կը գթէր և կը գայթէր զէպ ի մոլորութիւն, կռապաշտութիւն և աստուածադիտութիւն. ուստի Աստուած կը հանէր հրէից ազգէն նահապետներ և մարգարէներ, հաւատարիմ աւանդապահք աստուածապաշտութեան, որք կոչում ունէին յԱստուծոյ ընտրեալ Ազգին առաջնորդութիւն ընկրու, ուսուցանելով անոնց ճշմարիտ Աստուածը և վառ պահելու անոնց սրտերուն մէջ բարեխնամ Աստուծոյ արարչագործութեան մեծ երախտիքը, և առ այն իրենց երկիւղածութիւնը և հպատակութիւնը. սակայն սօքա ուլ անկատար և անբաւական էին Արարչի բուն նպատակին բաւականութիւն տալու, իրենց և իրենց սերնդոց համար փրկութեան և ի սկզբնական մեղաց ազատութեան ճանապարհ պատրաստելու. ուստի ի՞նչ միայն հրէից ազգին, այլ համայն մարդկութեան խիստ զգալի եղած էր երկնաւոր մխիթարութեան մը, մեծ

2001



62188 Ա. 2

ազատարարի մը յաշխարհ գալուստը, որոյ միջոցաւ մի միակ փրկութեան և ազատութեան ևլք մը, ճանտարար մը գտնելու համար, և Աստուած ալ ինչպէս որ ի յաւիտենից սահմանած էր, գլխաւով իւր սքանչելարուեստ ձեռակերտին՝ մարդկային ազգի անկեալ բնութեանը վրայ, և տեսնելով որ առանց հզօր բազլի մը և առանց հաշտութեան մեծ միջնորդի մը՝ մարդկութիւնը անկար պիտի մնար իւր կոչումը բարձրացնել և Աստուծոյ վսեմ նպատակին սրբութեամբ պատրաստուիլ և արդարութեամբ բարձրանալ. ուստի մարգարէից բերնով կանխաւ խոստացաւ իւր փառակից միածին որդին յաշխարհ զրկել անձառեղի անօրէնութեամբ մը, որոյ միջոցաւ մարդկութեան սպականեալ բնութիւնը, որ անբան անասնոց հաւասարած էր, վերականգնելու և որով իւր Աստուածութեան պատկերը սրբելու և մաքրագործելու համար:

Ուստի եկաւ յաշխարհ այն երկնաւոր խոստացեալ մխիթարութիւնը՝ աշխարհի ազատարարը՝ Յիսուս Քրիստոս Հօր Աստուծոյ փառակից որդին, որուն արդէն փրկութեան յուսով կ'սպասէր համայն մարդկութիւնը, ծնանելով ի Սրբոյ կուսէն Մարիամոյ իրրե մանուկ զարմանայի, որ հանդերձեալ էր լինել մխիթարութիւն աշխարհի և աւետիք բարեաց, և որ խոստացուած էր մեր նախահարց ու նահապետաց, և որոյ համար Եսայի կայծակնամաքուր մարգարէն կ'ըսէ. «Զի մտնուկ ծնաւ մեզ, որդի սուաւ մեզ, որոյ իշխանութիւն իւր եղև ի վերայ ուսոց իւրոց, և անուն կոչեցաւ նմա հրեշտակ մեծի խորհրդոյ, սքանչելի, խորհրդակից, Աստուած հզօր, իշխան, հայր հանդերձելոյ աշխարհին»: — Սնաւ Յիսուս աշխարհի վրայ և զարգացաւ հասակաւ իրրե կատարեալ մարդ և կատարեալ Աստուած և աճեցաւ շնորհօք և զօրութեամբ Սուրբ հոգւոյն, և այն ինչ երկոտասանամեայ հասակը թեւակոխած, զառաջինն սկսաւ իւր քարոզութիւնը սողոմոնեան հռչակաւոր տաճարին մէջ. որ ժողովեալ հրէից անթիւ բազմութիւնը, քահանայապետք, դպիրք և փարիսեցիք կ'սքանչանային և կը



զարմանային անոր շնորհալի և աստուածային խօսքերուն վերայ, որք իրրե յորդառատ և առատարուղիս ակն ճշմարտութեան՝ յորդեալ կը բղխէին անոր աստուածական շրթներէն և կը զովացնէին կենաց բանին պատքեալ և ծարաւի հողիները, և կը պարարէին անոնց սրտերն ու զգացումները երկնային ներշնչումներով, և այնուհետև սկսաւ իւր բարձր քարոզութիւնը տանէ ի տուն, քաղաքէ ի քաղաք. ի հրապարակս, յանձն ճանապարհոց, յանտանս և յամենայն ուրեք, ո՛ւր որ տեսնէր բազմութիւն մը՝ կարօտ աստուածային զովացուցիչ և պարարիչ կենաց բանին, չը խորրելով բնաւ ո՛չ հորուստը և ո՛չ աղքատը, ո՛չ հրէայն և ո՛չ հեթանոսը: Ահա այսպէս շարունակելով Երուսաղէմէն անցաւ Նազարէթ, ո՛ւր անեալն էր, և անդ շարաթ օրը մտնելով Ժողովրդանոցը՝ բացաւ Եսայի մարգարէի գիրքը և գտաւ այն տեղը, յորում գրուած էր. «Հոգի Տեսուն ի վերայ իմ, վասն որոյ և էօծ իսկ զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս, քարոզել գերեաց զթողութիւն և կուրաց տեսանել, արձակել զվիրաւորս ի թողութիւն, քարոզել զտարեկան Տեսուն ընդունելի և զօր հատուցման»: Եւ Յիսուս սոյն մարգարէութիւնը ընթեռնելով տուաւ մտտեանը պաշտօնէին ու ըսաւ, «Այսօր լցան գիրքս՝ այս յականջս ձեր»: այսինքն կատարեցաւ մարգարէից խորհուրդը անոր համար, որովհետև եկած հասած էր մարգարէից և օրինաց լրումը, որ էր ինքն Տէրն մեր Յիսուս Քրիստոս: Եւ ամէնքը կը վկայէին անոր և կը զարմանային անոր շնորհալի խօսքերուն վերայ, որք կ'ելլէին անոր աստուածային բերնէն:

Արդարեւ օժաւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս հոգւով սըրբով, օժաւ և իւղով աստուածութեան, և չէ թէ թագաւորի կամ մարգարէի նման նիւթական իւղով, և առաքեցաւ հօրմէն՝ հոգւով աղքատներուն աւետարանելու համար, որոնք աստուածային փառքերէն մերկացեալ էին, և զորս անդստին առաջին փառաց բարձրացոյց, ինչպէս ինքն կ'ըսէ «Երանելի են հոգւով աղքատները, որովհետև անոնցն է երկնից ար-

քայլութիւնը», բժշկեց աւետարանի ճշմարտութիւններով՝ սրտի ք բեկեալները, որք վիրաւորուած էին բանաստրկուելի հարուածներէն, ինչպէս ինքն ալ առակաւ յայտնեց իւր խնամքը, զոր ցոյց տուաւ՝ երբքովի ճանապարհին վրայ անկեալ վիրաւոր մարդուն վէրքերուն վրայ ձէթ և գինի դնել խնամելովն: Քարոզեց գերիներուն թողութիւն, այսինքն ազատութիւն. վասնզի եկած էր նա ազատելու բռնաւորէն գերեայները: Իսկ հոգւով կոյրերու տեսութիւն շնորհեց և օրինակաւ հաստատեց ու վկայ տուաւ երեւելի, աներեւոյթ հոգիներու լուսաւորութեան, շատերու մարմնոց աչքերը լուսաւարելով: Եւ վիրաւորները բժշկելով կապանքէ արձակեց: Եւ Տիրոջ տարեկանը ու հատուցման օրը ընդունելի քարոզեց, այսինքն անոր գալստեան ժամանակը փրկութիւն ընդունելու միջոց, զոր պիտի շնորհէր հաւատքով առ ինքն դիմողներուն, ինչպէս մարգարէն կը վկայէ «Այս է ժամանակ ընդունելի, այս է օր փրկութեան. մի՛ և մի իւրիք տայցէք պատճառս, զի մի՛ արատեսցի պաշտօնն»:

Ահա Եսայիայ սոյն մարգարէութիւնէն յայտնի կը տեսնուի թէ՛ Յիսուս յայխարհ եկած էր աստուածային պաշտօններ կատարելու. պաշտօններ, որք մի միայն նպատակ ունէին հաւատացելոց սիրտը ուղղելու ի բարին և հոգին կեցողացանելու յաւիտենական երանութիւնով, ինչպէս կ'ըսէ. «Ես եւկայ, որպէս զի կեանք ունենաք, և աւելին ալ ունենաք»: Եւ յաւիտենական Աթոռէն յերկիր խոնարհելով կը քարոզէր ամբողջ Պաղեստինու խոպան դաշտերուն և լերկ ու ապառաժու լեռներուն, ձորերուն և հովիտներուն ժանտաժուտ ընակչացը, ապերախտ իսրայէլեան ժողովուրդին թէ՛ ինքն եկած է հոգւով սրբով և զօրութեամբ Իսրայէլի Ենձովային, Աբրահամու, Իսահակայ և Յակովբայ ամենակարող Աստուծոյն, թէ ինքն եկած է Յեսսէի շառաւիղէն և Դաւթի ցեղէն սերելով գերբնական իմն զօրութեամբ, իբրեւ Աստուածորդի և իբրեւ գթած հայր և կենարար բժիշկ, որպէսզի բժշկէ, դեղ ու դարման ընէ հոգւով վիրաւորներու, սրտի ք



բեկեալներու փտտեալ և նեխեալ վիրաց, զորս բացած էր բանաստրկու սատանան իւր նենդամիտ խորամանկութիւնովը մեր նախահարց անմեղ հոգիներուն վրայ իբրեւ ցեղական ժառանգութիւն, որով մահացան ամբողջ Ազամայ սերունդք մինչև ի գալուստն Քրիստոսի, և շինէ զիրենք տաճար Աստուծոյ և ժառանգ երկնային արքայութեան: Այսպէս իւր քարոզութիւնները ընելով՝ գործեց այնպիսի հրաշքներ և սքանչելիքներ, որոնց համբաւը հասաւ ծագաց ի ծագս աշխարհի. հարվմէական և ըլեզանդական կայսրութեանց մէջ հռչակի հաճաւ թէ՛ մեծ մարգարէ մը յայտնուած է Պաղեստինու երկիրը, որ առանց զօրութեան և իշխանութեան իբրեւ սոսկական մարդ՝ կը գործէ Աստուծոյ մը յատուկ այնպիսի հրաշքներ, զորս կարող չէ՛ ընել աշխարհի տիրապետ մը. սակայն ափսոս որ հրէից ապերախտ ժողովուրդը՝ ա՛յնքան հրաշագործութեանց և սքանչելագործութեանց հանդէպ կոյր մնաց հոգւով, որոյ համար Աւետարանիչը կ'ըսէ. «Իրեններուն եկաւ և իրենները զինքը չընդունեցին, իսկ որոնք որ ընդունեցին, տուաւ անոնց որդիք Աստուծոյ կոչուելու իշխանութիւնը», որ ի վեր է քան զամենայն իշխանութիւնս երկրի:

Յիսուսի Քրիստոսի աստուածական պաշտօնի կոչումը լոկ քարոզութիւն ընել և հրաշքներ գործել չէր, ինչպէս իրմէ յառաջ շատ մը մարգարէներ եկած և քարոզած էին. այլ ինքն եկած էր իւր անպարտական արեան հեղումովը փրկութեան մեծ խորհուրդը կատարելու՝ համայն մարդկութեան գերեալ հոգիներուն համար. եկած էր նա հին իսրայելեան ստուերական օրինաց լրումն ու կատարումն տալու, նոր իսրայէլեան ժողովուրդ մը կազմելով քրիստոնեայ անուանակոչութեամբ, նա մանաւանդ Աստուծոյ տաճարին մէջ մարդկային մեղաց քաւութեան համար զոհուած անբան անասնոց տեղ՝ ինքը կենդանի պատարագ լինելու Գողգոթային գլուխը, ո՛չ միայն ի յաւիտենից ընտրեալ իսրայէլեան ազգին, այլ համայն մարդկային ազգին փրկութեան համար, որով պիտի վերջ



տար հին ուխտին զոհերու և ձենձերներու շատ մը սովորու-  
թեանց ու նախապաշարմանց՝ իրեն, յաւիտենական Աստու-  
ծոյն պատարագ և նոր ուխտի միջնորդ լինելովը. որուն հա-  
մար ~~հշտախոս~~ Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Եւ ո՛չ արեամբ նո-  
խազաց և զուարակաց, այլ իւրով արեամբն եմուտ միանգամ  
ի սրբութիւնսն, յաւիտենական՝ գտեալ զփրկութիւն: Զի ե-  
թէ արիւն ցլուցն և նոխազաց և մոխիր երնջոցն ցանեալ՝  
զպղծեալսն սրբէր առ ի մարմնոյ սրբութենէ, որչա՛փ ևս ա-  
ռաւել արիւնն Քրիստոսի, որ ի ձեռն հողւոյն յաւիտենակա-  
նի մատոյց զանձն անարատ պատարագ Աստուծոյ, սրբեցէ  
զխիղճ մտաց ձերոց ի մեռելոսի գործոց անտի՛ պաշտել զԱս-  
տուած կենդանի. և վասն այնորիկ նորոյ ուխտիս է միջնորդ»:  
«Այսինքն՝ ո՛չ թէ նոխազաց և զուարակաց արիւնով, այլ իւր  
արիւնովը մտաւ միանգամ սրբութեանց մէջ՝ յաւիտենական  
փրկութիւն գտնելով: Եթէ նոխազներու և ցուլերու արիւնը  
և երինջներու մոխիրը ցանուելով՝ մարմնոյ սրբութենէն պղղ-  
ծեալսն կը սրբէր. ո՞րչափ ևս առաւել Քրիստոսի արիւնը,  
որ յաւիտենական հողւոյն ձեռքովը մատոյց իւր անձը Աս-  
տուծոյ անարատ պատարագ, պիտի սրբէ ձեր մտաց խիղճը  
մեռելոսի գործերէ, որպէս զի սրբութեամբ պաշտէք կենդանի  
Աստուածը, և անոր համար նոր ուխտիս է միջնորդ»:  
Ուստի մեծ էր Յիսուսի Քրիստոսի կոչումը աշխարհի վերայ, և ան-  
շուշտ կարելի չէր մեծ մարգարէի մը կամ աշխարհակալ թա-  
գաւորի մը միջոցաւ կատարել այդ մեծ և նուիրական պաշ-  
տօնը. և անա այս պատճառաւ ի յաւիտենից սահմանած էր  
Աստուած իւր միածին Որդին զրկել յաշխարհ փրկութեան մեծ  
խորհուրդը կատարելու և սատանայի գերութենէն մարդկա-  
յին անկեալ բնութիւնը վերականգնելու համար:

Քրիստոսի յաշխարհ գալստենէն հազարաւոր տարիներ  
յառաջ զօրցես անոր նմանութիւնը և կոչումը ունեցող մի  
աստուածանման մարդ ևս կար հրէից ազգին մէջ, Մովսէս  
անուամբ. սա մնած էր Եգիպտոսի փարաւոնեան պալատին  
մէջ իրբեւ որդեգիր Փարաւոնի դստեր, որ պալատական կա-



նանց հետ գետեզրը շրջելու ժամանակ գտած էր զայն գետին  
մէջ կուպրով պատեալ կողովով մը, և խրղճալով՝ իրեն որ-  
դեկիր ըրած: Անոր գետը ձգուելուն պատճառն էր՝ Փարա-  
ւոնի այն մէկ հրամանը, որով կը պատուիրէր զպառնակներուն  
որ ևթէ իսրայէլացի կանայք արու զաւակ ծնանին, անմիջա-  
պէս խեղդամա՛ն առնեն զանոնք, որպէս զի Իսրայէլը Եգիպ-  
տոսի մէջ զօրանալով՝ ապագային իւր իշխանութիւնը յանձն-  
չը կորցէ. բաց յայսմանէ՛ այլեւայլ զրկանքներով և խիտտ աշ-  
խատանքներով ու ծանր հարկերով իրբեւ գերի կը նեղէր  
Յակովբայ սերունդը, որ երթալով կ'ամէր ու կը բազմանոր  
հակառակ Փարաւոնի դիտաւորութեան, որով կը ցանկար նա  
փճացնել զանոնք և կամ երկրէն յուսահատարար զաղթելու  
պարտաւորեցնել: Մովսէս ի աղայ տիոց ուսած էր Եգիպտոսի  
մէջ եղած ամէն գիտութիւնները. ուսումնասիրած էր իւր  
խեղճ ազգի անցեալն ու ներկայն. ուստի ի ժանկութենէ զառն  
ատելութիւն մը և արդար վրէժխնդրութիւն մը կը մնուցա-  
նէր իւր սրտին մէջ զէպի եգիպտական անգութ ժողովուրդը,  
իւր ազգի առաւպանքները ու զրկանքները ակնյայտնի տես-  
նելով: Ահա ազգային նախանձախնդրութեամբ լի այս աստ-  
ուածանման անձն էր, զոր Աստուած Քորէր լերսն վրայ  
ընտրեց Իսրայէլացեոց համար առաջնորդ և խնամակալ. որ-  
պէս զի աղատէ զանոնք Փարաւոններու դարաւոր գերութե-  
նէն և առաջնորդէ աւետեաց երկիրը, զոր խոստացած էր  
Աստուած տալ անոնց ի ժառանգութիւն:

Սրդարեւ Մովսէսի և Յիսուսի առաքելական պաշտօննե-  
րուն մէջ զգալի նմանութիւն մը կը տեսնուի, երկուքն ալ  
հաւատարապէս ընտրեալ են Աստուծմէ առաջնորդ և հովիւ  
Իսրայէլեան ժողովրդոց, սակայն ևթէ խորապէս քննենք և  
մտօք շօշափենք ասոնց պաշտամանց բնութիւնը, պիտի տես-  
նենք ակներև մեծ տարբերութիւններ երկոցունց կոչմանց  
մէջ: Մովսէսի բացարձակ պաշտօնն էր փրկել Իսրայէլը ե-  
գիպտական գերութենէն և առաջնորդել աւետեաց երկիրը,  
որ կաթ ու մեղր կը բլխէր, և զոր խոստացած էր Աստուած

անոնց սերնդոց ժառանգութիւն տալ, որչափ ժամանակի որ պաշտէին անոնք իրենց ճշմարիտ Աստուածը. իսկ Յիսուսն էր արդարեւ ճշմարիտ առաջնորդութիւն, ո՛չ միայն Իսրայէլացւոց ժողովրդեան, այլ հանուր մարդկութեան, և այդ առաջնորդութեան նպատակակէտն էր երկինք, անմահութիւն, յաւիտենական կեանք, զոր Յիսուս պիտի պարգևէր Ադամայ սերնդոց՝ իւր անարատ անձը անոնց մեղաց փոխանակ փրկանք տալով և նոր ժողովուրդ մը կազմելով: Ուստի կրնանք մակարեւել թէ՛ որչափ անհամեմատ բարձր էր Յիսուսի պաշտօնը Մովսէսի պաշտօնէն: Մէկը կը խոստանայ երկրաւոր հանդսութիւն, աւետեաց երկիր՝ տառուպակիր ճանապարհորդութենէ մը վերջ. իսկ միւսը կը խոստանայ երկնային դրախտ և անմահ երջանիկ կեանք, միմիայն պահանջելով իրեն հետեւողներէն արդար և սուրբ կեանք ու աստուածապաշտութիւն: Սոյն երկու աստուածանման անձանց կոչման մեծ տարբերութիւնը և անհամեմատութիւնը աւելի պարզ և մէկին կը տեսնուին իրենց աստուածահաճոյ դործոց և հրաշից հետագայ բողոքատական զուգակշռէն:

**Մ**ովսէս Քորէր լեռնէն յ'եզիպոս իջաւ պատուհասի դաւազանով Իսրայէլը փրկելու. մինչդեռ Յիսուս երկինքէն յաշխարհ եկաւ կենաց բանով բովանդակ տիեզերքը փրկելու և յաւիտենական կեանք պարգևելու համար: Մովսէսի հրովարտակը պատուհասի սրիւնով դրոշմուած՝ բովանդակ Եզիպոսի անդրանիկները ջարդեց, մինչդեռ Յիսուսի աւետարանին հրովարտակը բոլոր մարդկութեան ներողութիւն բերաւ և մեղեայններ յարոյց: Մովսէս գտակական գառը մորթել հրամայեց, որով ազատեցաւ Իսրայէլացւոց ազգը Փարաւոնի գերութենէն. իսկ Քրիստոս ինքը ճշմարիտ դառ՝ զենաւ և ազատեց զմեզ սատանայի գերութենէն: Մովսէս դառն ջուրը քաղցրացոյց և գետը արեան փոխարկեց, մինչդեռ Յիսուս ջուրը զինի փոխեց և զինին իւր սուրբ արեան: Մովսէս երկոտասան իշխանօք Իսրայէլի երկոտասան ցեղերը առաջնորդեց աւետեաց երկիրը, մինչդեռ Յիսուս երկոտասան առաքե-



լովք քրիստոնէից ազգը երկինք հրաւիրեց: Մովսէս ապառաժ յիսկէն ջուր բղխեցուց, որպէս զի իսրայէլի պառքեալ ժողովուրդը ասթակէզ անպատին մէջ իւր պապակը անցնէ. մինչդեռ Քրիստոսի կողերէն բղխեցին ազրիւրք անմահութեան ի գմայլումն պառքելոց և ի լուսցումն ակաթեա հոգւոց: Մովսէս անպատին մէջ օձը բարձրացոյց, որով օձահարները բժշկեց, մինչդեռ Յիսուս ինքը բարձրացաւ ի խաչ Բեթելայ սարին զլուսը, և սատանայէն թունաւորուածները բժշկեց, հոգւով: Մովսէս ձեռքի տարածմամբ զԱմաղէկը կը պարտէր, իսկ Յիսուս բազկատարած ի խաչին՝ սատանայի իշխանութիւնը կը կործանէր: Մովսէս խաչանիշ դաւազանաւ կարմիր ծովը պատուց. որով անցան Իսրայէլացիք ընդ ցամաք, իսկ Յիսուս իւր խաչիւ աշխարհի մեղաց ծովը պատուեց և փոխանակ սիւն ամպոյ՝ Սուրբ հոգին և աւետարանին լոյսը ծագեց հոգիներուն: Մովսէս առաջնորդութիւն բնելով՝ Իսրայէլացիները քառասուն տարի Սինայի անջուր անպատը թափառական շրջեցոյց: մինչդեռ Յիսուս ի խաչ բարձրանալով՝ աշխարհ ամենայն երկինք առաջնորդեց: Մովսէսի հովուական պաշտօնին մէջ անպակաս էին արտուենջներ, նօթութիւն, ծաւաւ, յուսահատութիւն, պատժախառն բարեբարութիւն, ապերախառութիւն, բարկութիւն Աստուծոյ և պատիժ, մինչդեռ Յիսուս իբրև քաջ հովիտ՝ իւր բանական հօտին անխնայ ջամբեց կենաց հաց և արրոյց ջուր կենդանի՝ հաւատով, յուսով իրեն զիմողներուն՝ ազազակելով «որ ծաղախն իցէ, եկեացէ առ իս», և առաջնորդեց զամենայն հօտտացեալս ի մարգս դալարիս աստուածապաշտութեան: Մովսէս ահաւոր անպատին մէջ հրէական ժողովուրդը կը դատարարակէր և կը դատէր պատժական խիստ օրէնքով մը, և ակն ընդ ականով դատաստանի վճիռ կարձակէր, և ժողովուրդը ահով ու դողով կը մերձանար անոր և կը զարհուրէր նշմարել անոր քողապատ երեսը. մինչդեռ Յիսուս, թանձրամաժ ամպերու մէջէն միգով և մառախուղով ու ահաւոր ձայնով որտացող անմատչելին Աստուած՝ երկինքի ահաւոր լարձրութենէն և իւր

տիրապետական Աթոռէն՝ որպէս ցօղ մեղմար կ'իջնայ մինչեւ Պաղեստինու նսեմ և խոնարհ երկիրը, և կը կոչէ ամեն դասակարգի անձինք, թէ՛ հրէայ լինին և թէ՛ հեթանոս, որոնք որ կարօտ էին կենաց բանը լսելու և յաւիտենական կենդանի ակնէն ըմպելու յաւիտեանս չը ծարուելու համար: Յիսուս իրրեւ ճշմարտութիւն և կեանք յայտնուեցաւ մարդկան, իսկ Մովսէս օրինակ լինելով ճշմարտութեան՝ աստուածական պատիւ ստացաւ իւր ժողովուրդէն, ահա ա՛յսքան բարձր է և անհամեմատ առաւել մեծ՝ աշխարհի վրայ Յիսուսի պաշտօնը Մովսէսի պաշտօնէն:

Ուրեմն հաւատացեալ քրիստոնեայն Քրիստոսի փրկագործութեան և անօրինական անեղ խորհուրդը և նորա անչափ և բախտիքը յիշելով՝ մեծ և վսեմ պարտաւորութիւններ ունի կատարելիք աշխարհի վերայ, որպէս զի անոր թափած անմեղ արիւնը յուժպէտս վատնուած չը լինի, անոր՝ մահուան խաչին վերայ թափած քրտանց ոլոռն ոլոռն կայլակներուն և անբիծ արեան հանդիսատես հաւատացեալը պէտք է ունենայ այնպիսի կենցաղավարութիւն մը և այնպիսի սուրբ և մաքուր կեանք մը, որով իւր սիրան ու զգացումը, հոգին ու մարմինը, ի մի բան՝ իւր բովանդակ անձը տածար և օթեւան չինէ Քրիստոսի, և համապատասխանեցնէ անոր հեղ և խոնարհ կենաց և նմանող լինի անոր՝ ըստ ամենայնի, որ փառաց և տիեզերաց բացարձակ արարիչը լինելով՝ բնաւ անարգութիւն չը համարեց մեղ նման մարմին զգնուել և մեղ նմանիլ, ու իրեն կղբայր կոչել զմեզ. «ահա՛ ասոր համար էր, որ Պօղոս առաքեալ իւր հաւատացեալ հօտը կը խրատէր, Յիսուսի նմանութիւնը բերել եւ կրել իրենց անձանց մէջ. նա կ'ըսէր «նմանողք եղերուք ինձ, որպէս և ես Քրիստոսի»: Արդարեւ սոյն առաքեալը, որ երբեմն Քրիստոսի եկեղեցին կը հալածէր և անոր հաւատացեալ հօտը ի մահ կը վարէր, յանկարծակի իմ հրաշիւք քրիստոնեայ դառնալով զՔրիստոս կ'զգնուէ, և կը լինի առաքելոց մէջ նշանաւոր թէ քարոզութեամբ աւետարանին և թէ՛ ճգնազգեաց վարուքն ու լնտիր կենցաղավարութեամբը, նա այնուհետեւ Քրիստոսի սուրբ սիրո-



վր վառուած բնաւ կարեւորութիւն չէր տար ամեն կերպ հալածանաց և չէր լքանիր յուսահատութեամբ ինչպէս աշխարհաւէրք ունանք կը լքանին փոքրիկ նեղութիւնէ մը, այլ առաթուր կը կոխէր ամեն խաչ և խուժ ու կը քարոզէր ճշմարիտ Աստուածը իւր կենդանի խօսքերով, և իւր անձը, որ հասարակաց փրկութեանը զոհած էր, խոնարհութեան և սրբութեան օրինակ տալով, կ'ուսուցանէր և կը քարոզէր հաւատացելոց մինչև որ Քրիստոսը նկարէ անոնց սրտերուն մէջ վառ պահէ անոր խաչին մեծ խորհուրդը, կ'ուսուցանէր իւր հօտին թէ՛ որոնք որ Աստուծոյ հոգւովը կը կենցաղավարեն, անոնք են որդիք Աստուծոյ. իսկ որոնք որ Աստուծոյ հոգին չունին, անոնք որդիք Աստուծոյ չեն կարող լինիլ: Արդեօք մենք ունինք Քրիստոսի հոգին, միանգամ ի փորձ մտնենք. հոգի Քրիստոսի է՝ հոգի խոնարհութեան, հոգի հեղուցութեան, հոգի սիրոյ, հոգի անխտկալութեան. այս հոգին կը վարժէ զմեզ և կուսուցանէ ներել թշնամոյն, բառնալ Քրիստոսի խաչը, կրից դէմ մարտ դնել: Հպարտութեան հոգին չէ՛ Քրիստոսինը, որով կ'արհամարհենք փոքրերը և որով փառաց և գովութեանց թեկնածու կը լինինք: Վրէժխնդրութեան հոգին չէ՛ Քրիստոսինը, որ թոյլ չը տար մեղ ներել անիրաւութեանց ի սէր Աստուծոյ, որ այնչափ մարդասիրութիւն ցոյց տուած է մեզ: Ատելութեան և ոխակալութեան հոգին չէ՛ Քրիստոսինը, որով եթէ մեր կղբօրց մարմնոյն չար չը հասուցանենք, աւելի մեծ չարիք կը հասուցանենք, անոնց սրտերուն, բաժրասելով և անուանարկ աննեներով զանոնք, այլ պէտք է ունենանք այն հոգին, որով Քրիստոս զմեզ սիրեց մահու չափ և մահու խաչի. այն հոգին, զոր նա մեր տկարութեան և անձկութեան ժամանակ մխիթարիչ և օգնական կ'առաքէ, մեր կենաց՝ սպաւէն՝ և ծերութեան ժամանակ նեցուկ, և մեր մահուան սնարին՝ մօտ յոյս և յաւիտենական կեանք կը ներշնչէ, և վերջապէս ցլտիւճան կենաց կը մխիթարէ յուսով և կ'սփոփէ սրտով:

«Նմանողք եղերուք ինձ, որպէս և ես Քրիստոսի» կ'ըսէ Պօղոս առաքեալ. պէտք է քաջ ածեմք Քրիստոսի այն ան-

յոյ՜

յիշաչարութիւնը և անոխակալութիւնը, որով նա խաչին վերայ մահուան սարսափելի ժամերուն կը գոչէր. «հա՛յր. թո՛ղ դոցա, զի ո՛չ գիտեն զինչ գործեն», և լինինք մեր եղբարց և բարեկամաց բանիւ և գործով զէպի մեզ ցոյց տուած զըրկանաց և զբարատութեանց անյիշաչար և ներող, և եթէ կարելի լինի՝ արդարութեան պարտ մը կատարելու համար օգնենք այնպիսիներուն և լուսաւորենք անոնց հոգիները աւետարանական ճշմարտութիւններով բնական բարին ճանաչելու, և խորշելու վատ ունակութիւններէ ու ամէն չար դործերէ, յայնժամ արդեամբ ցոյց տուած կը լինինք մի գործնական փորձ Քրիստոսին նմանելու, պէտք է Պօղոսի նման օրհնենք զանիծանողս և բարի ընենք զմեզ ~~անսպասելի~~ ատողներուն, և մեր խոնարհ ու հլու անձը անոնց աչքին արդարութեան օրինակ և հայելի ներկայացնենք, որպէս զի տեսնեն նոյն խոնարհութեան ու հլութեան մէջ իրենց ամբարտաւան և ատող ոգին, ու զբաստանան և սթափին իրենց վատ կիրքերէն, և զգե՛նուն աւետարանի հեղութիւնն ու խոնարհութիւնը, յանժամ փորձով ցոյց տուած կը լինինք Քրիստոսի նմանութիւնը ունենալիս: Պէտք է ամեն ժամանակ Յիսուսի մահուան յիշատակը մեր մարմնոյն մէջ կրենք, որպէս զի անոր կեանքը մեր մարմնոյն մէջ իսկապէս յայտնուի և նըկարուի, և ունենանք քրիստոնէի մը յատուկ բարեմասնութիւնները. մեր հաստատուն յոյսը շարունակական մըտածուած առ Աստուած պէտք է ուղղուած լինին, զի նորա սուրբ արիւնով զնուած ենք, ինչպէս և առաքեալը «գնոց գնեցայք, փառաւոր արարէք զԱստուած ի մարմինս ձեր»: Մեր մարմնոյն մէջ Աստուծոյ ներկայութիւնը և անոր յախտնական երախտիքն ու յիշատակը այն ժամանակ անմուռաց կ'ունենան, երբ աւետարանական ճշմարտութիւնները ու կենաց խօսքերը իրրև հոնապազօրեայ դաս և կենդանի աղօթք մըմնջենք և որոճանք մտօք ու սեփականենք մեզ անգին դանձի նման և գործնականապէս լինինք աւետարանականներ, որպէս զի ճշմարտի առաքելոյն պատշամը թէ՛ Ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք»: Աւետարանի դասերը



խիստ պարզ են և զիւրրմբունելի՝ հաստատ յոյս ունեցողներուն և Քրիստոսի աստուածութեան սիրով սօզորեալ հաւատացեալներուն համար, նա կը պատուիրէ չընել այն բանը մէկու մը, ինչ որ չենք ուզեր, որ այլք մեզ ընեն, նոյնը կ'ուսուցանէ աշխարհի իմաստասիրական և բարոյական օրէնքը. անա՛րդարութեան կանոն մը կենցաղավարութեանց մէջ, որով ապրողները բնաւ չեն ունենար յընթացս կենաց մեղապարտ կեանք մը հակառակ աւետարանի ոգւոյն: Թշնամիները սիրել, բարի ընել ատելիաց, օգնել կարօտելոց և չքաւորաց, տալ Աստուծոյնը Աստուծոյ և կայսերը՝ կայսեր. եղբայրսիրութեան զհետ լինել. այս ամէնը քրիստոնեայ մը անթերի կատարելով, ո՛չ ապաքէն թշնամին և ատելին առ հասարակ իրեն հետ պիտի բարեկամացնէ և երախտապարտ կացուցանէ կարօտեալները իրեն՝ մարդասիրութեան և գթութեան յիշատակի սերտ կապերով, և աշխարհի դրական օրինաց հակառակ չը վարուելով՝ զերձ պիտի լինի նա կենցաղոյս ալձուփ և մրրկալից անսկնկալ փոթորիկներէն և վտանգներէն. որով պիտի շահի նա իւր կեանքը թէ՛ այս աշխարհիս մէջ և թէ՛ հանդերձելոյն. տեսէք ի՛նչպիսի վեհութեամբ և բնական կարգաւ վերոյիշեալ ճշմարտութիւնները կը թուէ առաքեալը իւր հօտին ուղղելու ժամանակ. կ'ըսէ նա. «Աղաչեմ ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ, զիստուն պաշտօնդ ձեր: Սէր առանց կեղծաւորութեան, ատել զչար, զհետ երթալ բարեաց: Եղբայրսիրութեամբ առ միմեանս գըթածք. ի պատիւ զմիմեամբք ելանել, ի փոյթ, մի՛ վհնե՛րոտք, հոգւով եռացէք, Տեառն ծառայեցէք, յուսով ինդացէք, նեղութեան համբերեցէք. աղօթից ստէպ կացէք: Ի պէտս Սրբոց հաղորդեցարուք: Զհիւրասիրութեան զհետ երթալք: Օրհնեցէք զհալածիչս ձեր, օրհնեցէք և մի՛ անիծանէք, խնդալ ընդ ինդացողս, լալ ընդ լացողս: Զնոյն միմեանց խորհիցիք, մի՛ ամբարտաւանիք, այլ ընդ խոնարհս զիջանիցիք: Մի՛ լինիք իմաստունք յանձինս ձեր: Մի՛ ումեք չարի զչար հատուցանէք, խորհեցարուք զբարիս. մի՛ միայն առաջի Աս-

տուժոյ, այլ և առաջի ամենայն մարդկան: Եթէ հնար ինչ ի-  
ցէ ձեզ՝ ընդ ամենայն մարդկան զիսաղաղութիւն ունիցիք:  
Մի՛ յալթիր ի չարէն, այլ յաղթեա՛ բարեաւն չարին»:

Ուրեմն կը մնայ մեզ իբրեւ Քրիստոնեայ և Քրիստոսի  
հաւատով և սուրբ սիրովն զօրացեալ արի զինուորներ, միշտ  
աղօթել ջերմեանդութեամբ և պաղտախ առ Աստուածն ա-  
մենից, որ առաքէ մեզ իւր Սուրբ հոգին զօրավիգն և պաշտ-  
պան, որպէս զի անով զօրանանք, ժիր և արթուն լինինք մեր  
քնական, բարոյական և կրօնական պարտաորութեանց մէջ,  
պաշտենք սուրբ և աննկեղ սրտով մեր ուղղափառ Սուրբ ե-  
կեղեցին Հայաստանեայց, և մեր սրտի անկեղծ զգացումները  
և բարի զիտաւորութիւնները ուղղենք միամտութեամբ առ  
վէմն հաւատոյ Սուրբ Եկեղեցւոյ, որ է ինքն Տէրն մեր Յի-  
սուս Քրիստոս, որպէս զի վառ պահէ մեր սրտերուն սուրբ  
սիրոյ կայծը՝ աստուածպաշտութեան մէջ յարատեւելու, որով  
միշտ օրհնենք և փառաբանենք անոր Աստուածութիւնը, յի-  
շելով իւր անչափ խնամքը, անհուն բարութիւնն ու մեծ և  
բախտիքը, զոր ցոյց տուաւ մեզ՝ մարդկային ազգի փրկու-  
թեան համար ամենազգի չարչարանքներ և դառն տառապու-  
կրութիւններ յանձն տունելով, և մինչեւ ի խաչ մահու բարձ-  
րանալով, մաղթենք նոյնպէս, որ սոյն ազգաւոր և անցաւոր  
երկրիս մէջ զօլունի և քրիստոնէական անրիժ կենօք կենցա-  
ղավարելով՝ խոտաացեալ բարեայ և երանութեանց արժանի  
լինինք, ի փառս և ի պատիւ ամենասուրբ անուան իւր Աստ-  
ուածութեան:


1886 Սեպտեմբեր 18

Ի Ս. Արու

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԿԱՒԱԳ

(Խարբերոցի)

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ



ՅՈՒՇԵՐ ԵՒ ՆՅՈՒՆԵՐ

ՍԱԳԻՄԱԿԱՆ ՑԻՇԱՏԱԿՆԵՐ

ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ՄՈՎՍԷՍ

Գեղ. քաղաքի քահանայ Եր